ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF DIASPORA OF
THE REPUBLIC OF ARMENIA

«23» .....12..... 2009թ.

.....02/9.02-23·09

«ՀՏԻ ԳՀԻ» ՓԲԸ –Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հայտնում ենք Ձեզ, որ որ անհրաժեշտություն է առաջացել ՀՀ սփյուռքի նախարարության կարիքների բավարարման համար՝ «Այլ ծախսեր» հոդվածով ձեռք բերել կենցաղային և համակարգչային տեխնիկա և տեղափոխել այն մեր կողմից նշված վայրը:

1. Համակարգիչ 5 հատ
2. Մոնիտոր 5 հատ
3. Տպիչ 2 հատ
4. Պրոեկտոր 1 հատ
5. Պրոեկտորի էկրան 1 հատ
6. Հեռուստացույց 9 հատ
7. ԴՎԴ սարք /փլեեր/ 9 հատ

Առաջարկվում է Ձեզ մատակարարել վերոհիշյալ ապրանքները:

Գնումները ֆինանսավորվելու են 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Գնումներին մասնակցելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ «ՀՏԻ ԳՀԻ» ՓԲԸ -ն.

1. ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.

2. դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել, լուծարման գործընթացում չի գտնվում, արգելանքի տակ չունի պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք.

3. կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում.

- դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,
- գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,
- իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

4. ներկայացնի տեղեկատվություն ապրանքների ծագման երկրի մասին:

Համաձայնության դեպքում խնդրում ենք ներկայացնել սույն գրության մեջ նշված հայտարարությունը և գնային առաջարկը:

Միաժամանակ, կից ներկայացնում ենք հիշյալ ապրանքների գնման պայմանագրի նախագիծը:

Հարգանքներով՝

ՖԻՐԴՈՒՍ ԶԱՔԱՐՅԱՆ

ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԳՀԻ ՓԲԸ
ЗАО НИИ ВЫЧИСЛИТЕЛЬНОЙ ТЕХНИКИ И ИНФОРМАТИКИ
COMPUTING TECHNICS and INFORMATICS SCIENTIFIC-RESEARCH INSTITUTE CJSC

Հասցե՝	0038 Երևան, Աբելյան փող. 6/1	Адрес:	0038 Ереван, ул. Авеляна 6/1	Address:	6/1 Abelian St. 0038 Yerevan
Հեռ.՝	(37410) 39-84-99	Тел.:	(37410) 39-84-99	Phone:	(37410) 39-84-99
Ֆաքս՝	(37410) 39-85-73	Факс:	(37410) 39-85-73	Fax:	(3741) 39-85-73
է. Փոստ՝	info@itpark.am	Э. Почта:	info@itpark.am	E-mail	info@itpark.am

23.12.09 N 1/481

Ի պատասխան Ձեր 23.12.2009թ. N 02/902-23.09 գրության, սույնով հավաստում ենք, որ «ՀՏԻ ԳՀԻ» ՓԲԸ -ն.

1. ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.
2. դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել, լուծարման գործընթացում չի գտնվում, արգելանքի տակ չունի պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք.
3. կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում՝
   - դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար,
   - գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,
   - իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:
4. ապրանքները արտադրված են

1. Համակարգիչ - Թայվան,Չինաստան

2. Մոնիտոր - Թայվան,Չինաստան

3. Տպիչ - Թայվան,Չինաստան

4. Պրոեկտոր - Թայվան,Չինաստան

5. Պրոեկտորի էկրան - Թայվան,Չինաստան

6. Հեռուստացույց - Թայվան,Չինաստան

7. ԴՎԴ սարք /փլեր/ - Թայվան,Չինաստան:

«ՀՏԻ ԳՀԻ» ՓԲԸ -ն հայտնում է իր համաձայնությունը՝ Ձեր վերոհիշյալ գրության մեջ նշված ապրանքները մատակարարել 2 900 000 ՀՀ դրամով և Ձեր կողմից նշված վայրում:

Հարգանքներով՝

տնօրեն Գ.Հարությունյան

ԱՊՐԱՆՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԱՊՁԲ 33/09-

ք. Երևան «24» դեկտեմբեր 2009թ.

«Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունը,, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ֆիլիպոս Զաքարյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա, այսուհետև՝«Գնորդ». մի կողմից. և «ՀՏԻ ԳՀԻ» ՓԲԸ, ի դեմս Ընկերության տնօրեն Գագիկ Կարապետյանի,, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետև՝ Պայմանագիր), սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին մատակարարել /հավելված 2/ սույն պայմանագրի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի չօգտագործված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված մատակարարումները իրականացվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև 12.01.2010թ. ներառյալ:

1.3. Գնորդի Ապրանքը մատակարարում է Պատվիրատուի սահմանած քանակներին և մատակարարման վայրերին համապատասխան:

2.Գնման առաարկայի բնութագիրը

2.1 Գնման առարկա է հանդիսանում սույն պայմանագրի անբաժանելի մասը համարվող N1 հավելվածով նախատեսված ապրանքների գնումը:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) Պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը :

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքների անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքներով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի). եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

3.1.8 Ընդունել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Սույն պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է սույն պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ) և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.4 Գնորդին հանձնել սույն պայմանագրի հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.6 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Մատարարարին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.7 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.8 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.9 Սույն Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի հանձնած Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 2.900.000 (երկու միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը, տուրքերը և այլ վճարները, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Գնի ցանկացած փոփոխություն իրականացվում է միայն կողմերի համաձայնությամբ:

4.2 Գնորդը սույն պայմանագրի 4.1.կետում նշված `2.900.000 (երկու միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամը միանվագ կարգով որպես 100% կանխավճար փոխանցում է Վաճառողի հաշվարկային հաշվին՝ սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 4 բանկային օրվա ընթացքում:

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

6.2 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.3 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05%-ի չափով:

7.3 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,05%-ի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հետ են գանձվում Վաճառողին որպես կանխավճար փոխանցված գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7.8 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Գնորդի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

9.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

9.4 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի հավելված 1-ը՝ բաղկացած 2 թերթից և հավելված 2-ը՝ բաղկացած 1 թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.5 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ սփյուռքի նախարարության ք. Երևան, Վ. Սարգսյանի 26/1. ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն ՀՎՀՀ02705838 Հ/Հ 900011039030	«ՀՏԻ ԳՀԻ» ՓԲԸ ք.Երևան, Աբելյան 6/1 h/h 001-024090-001 Էյչ Էս Բի Սի Հայաստան բանկ ՀՎՀՀ 01201912
Ֆ.Զարգարյան	Գ.Կարապետյան
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	

Հավելված 1

«24» «12» 2009թ. կնքված

ԿՊՀ-33/09 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ապրանքի անվանումը	Տեխնիկական հատկանիշները և այլ պահանջներ
Համակարգիչ	Intel Dual Core E5200/MB MSI G31M3-F/HDD160 GB Seagate SATA/DVD-RW LG 22/Keyboard Discovery713/Mouse Genius120 կամ համարժեք
Մոնիտոր	Viewsonic VA1916W Anti-glare (3H), Type 700:1 (typ.), 2000:1 (DCR), Contrast: 150° horizontal, 140° vertical (at 10:1) 170° horizontal, 160° vertical (at 5:1); Resolution: 1440 x 900@60Hz կամ համարժեք
Տպիչ	HP LaserJet P2014 Printer - Print speed black (normal, A4) Up to 23 ppm, Print quality black (best) Up to 1200 x 1200 dpi, Duty cycle (monthly, A4) Up to 10000 pages, Recommended monthly page volume 500 to 2500, Standard memory 32 MB, Maximum memory 32 MB, Processor speed 264 MHz, Standard connectivity Hi-Speed USB 2.0 compatible port, Paper handling standard/input 250-sheet input tray, 50-sheet multi-purpose tray կամ համարժեք
Տպիչ	HP PhotoSmart D5363 A4 USB, Black dpi 1200 dpi, Color dpi 4800 optimized dpi, Black printout *Up to 32 pages per minute after first page, Color printout *Up to 24 pages per minute after first page, Front USB port: 2.0 full speed, for Pictbridge and Bluetooth, Rear USB Port: 2.0 high speed, for computer, Four memory card slots: xD-Picture Card, Memory Stick, Compact Flash I and II, Secure Digital (SD), Multimedia Card (MMC), XD, Bluetooth wireless printing compatible with optional Bluetooth adapter, iPod compatible with the USB cable that came with the iPod, CD/DVD holder to print on CDs and DVDs, Internal memory - 64 MB կամ համարժեք
Պրոեկտոր	Projector Toshiba TDP-SP1U DLP™ Display Technology, 2200 ANSI Lumens, 800 x 600 Native Resolution, 4:3 Native Aspect Ratio, 2000:1 Contrast Ratio կամ համարժեք
Պրոեկտորի էկրան	COMBIFLESH Tripod Screen Screen Surface: Front Projection, Gain Factor 1.2, HW 150/150, կամ

Արբանյակային ալէհավաք	DISH 2.4M DIPLOSAT Reflector diameter: short axis: 240cm C-Band 3.7-4.2 Ghz: 38.39 dB RECEIV STAR TRACK ST-15X ST-15X SUPER Free to air receiver. IF in / out, 1TV scart, 3RCA (2 Audio, 1 Video), RS-232, power on/off. Hardware: ALI 3329C with, sharp 0502V, AT26DF161 flash. կամ համարժեք
Հեռուստացույց	Samsung CS21Z30 SlimFit TV Z30 series 21" (54 cm) Ultra Slim picture tube (54 cm visible) Aspect Ratio : 4:3 System : SECAM-B/G, D/K; PAL-B/G, D/K, I; NTSC 4.43, VIT; NTCS 3.58 (on Air); VHF/UHF (1-12 / 21-69) կամ համարժեք
ԴՎԴ սարք /փլեեր/	Toshiba DVD Player SD-690 Playable Disc Types: DVD-Video, DVD-/+R, DVD-/+RW, DVD -/+R (DL), SVCD, VCD, CD, CD-R, CD-RW, Video D/A: 14-Bit/108MHz կամ համարժեք

Պարտադիր պայման՝ ապրանքը պետք է լինի չօգտագործված

ԳՆՈՐԴ

ՀՀ սփյուռքի նախարարության
ք. Երևան, Վ. Սարգսյանի 26/1.
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ02705838
Հ/Հ 900011039030

Ֆ.Զաքարյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«ՀՏԻ ԳՀԻ» ՓԲԸ
ք. Երևան, Աբելյան 6/1
ՀՎՀՀ 01201912

ԷՅՉ ԷՍ ԲԻ ՍԻ Հայաստան բանկ
Հ/Հ 001-024090-001

Գ.Կարապետյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2

«24» «12» 2009թ. կնքված

ԿՊՀ 33/09 պայմանագրի

Գնման ժամանակացույց

Գնման ենթակա ապրանքների անվանումը	Չափի միավորը	Միավորի գինը	Մատակարարման ժամկետ՝ 12 հունվար 2009թ. ներառյալ	
			Քանակը	Գումարը
Համակարգիչ	հատ	129150	5	645700
Մոնիտոր	հատ	60416.67	5	302083
Տպիչ	հատ	62500	1	62500
Տպիչ	հատ	46667	1	46667
Պրոեկտոր	հատ	300000	1	300000
Պրոեկտորի էկրան	հատ	133333	1	133333
Արբանյակային ալեհավաք	հատ	83333	1	83333
Հեռուստացույց	հատ	69916,67	9	629250
ԴՎԴ սարք /փլեեր/	հատ	23750	9	213750
ԸՆԴԱՄԵՆԸ այդ թվում ԱԱՀ 20%				2 900 000

ԳՆՈՐԴ

ՀՀ սփյուռքի նախարարության
ք. Երևան, Վ. Սարգսյանի 26/1.
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ02705838
Հ/Հ 900011039030

Ֆ.Զաքարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«ՀՏԻ ԳՀԻ» ՓԲԸ
ք. Երևան, Աբելյան 6/1
ՀՎՀՀ 01201912

ԷՅՉ ԷՍ ԲԻ ՍԻ Հայաստան բանկ
Հ/Հ 001-024090-001

Գ.Կարապետյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հայտարարություն

Ն ԱՊՁԲ 33/09 պայմանագրով նախատեսված համակարգիչների, համակարգչային և կենցաղային տեխնիկայի տեխնիկական բնութագրով տեղական արտադրության ապրանքների մատակարարումը հնարավոր չէ:

Գործերի կառավարիչ՝ Կ.Սեդրակյան

Հաստատում եմ
ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի
ղեկավար Ֆ. Զաքարյան
(Պատվիրատուի ղեկավարի անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

«26» «12» 2009թ.

ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հիմնական տեղեկություններ գնման մասին

1.1. Պատվիրատուի

Անվանումը ՀՀ սփյուռքի նախարարություն
Հասցեն . **ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1**

1.2. Գնման առարկայի տեսակը

ապրանք V աշխատանք ☐ ծառայություն ☐

1.3. Կարիքի բավարարման միջոցը

գնում V վարձակալություն ☐ լիզինգ ☐

1.4. Գնման առարկայի համառոտ նկարագիրը՝ Համակարգիչներ, մոնիտորներ, հեռուստացույցեր, տպիչներ, ալեհավաքներ, պրոյեկտորներ, DVD սարքեր

1.5. Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձի

Անվանումը (անունը, ազգանունը) «ՀՏԻ ԳՀԻ» ՓԲԸ
Հասցեն՝ ք. Երևան, Աբելյան 6/1

1.6. Կնքված գնման պայմանագրի (կցվում է)

Ծածկագիրը N ԱՊՁԲ 33/09
Կնքման ամսաթիվը 24/12/09թ.

Գործողության ժամկետը՝ մինչև կողմերի պարտավորությունների ողջ ծավալով կատարումը
Գինը՝ 2 900 000 ՀՀ դրամ

1.7. Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ 2009թ. պետական բյուջե
«Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական եւ տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում (նախարարությունների աշխատակազմերի մասով)» ծրագրով «Այլ ծախսեր» հոդվածով (բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 05)

1.8. Գնումների պաշտոնական տեղեկագրում կնքված պայմանագրի մասին տեղեկատվություն հրապարակելու նպատակով պատվիրատուն լիազոր մարմնին ներկայացրե՞լ է պահանջվող տեղեկատվության տեքստը

Ոչ ☐

2. Գնման գործընթացի նախապատրաստումը

2.1. Գնման պահանջի ծագման

Իրավական հիմքը՝ ՀՀ սփյուռքի նախարարի կարգադրություն
Օրը, ամսաթիվը՝ 14/12/09թ.

2.2. Պատվիրատուի ղեկավարը սահմանել է՝

Պատասխանատու ստորաբաժանում ☒ Տեխնիկական հսկողության հանձնաժողով

Անվանումը՝ Գործերի կառավարիչ Կ. Սեդրակյան

2.3 Մեկ անձից գնման ձևի կիրառման պայմանն ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համապատասխան կետի՝

գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, մրցակցության բացակայությամբ, լիցենզիայի առկայությամբ.

☒ արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և գնման այլ ձևի կիրառումը՝ ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել, ինչպես նաև եթե գնման առարկան ներառված չէ պարբերական մրցույթով կնքված պայմանագրերում.

պատվիրատուն, որևէ անձից կատարելով գնում, որոշում է լրացուցիչ գնում կատարել նույն անձից, պայմանով, որ դրա գինը չգերազանցի սկզբնական գնման պայմանագրի գնի քսան տոկոսը: Միևնույն անձից սույն կետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ:

2.4 Մեկ անձից գնման ձևի կիրառման ընտրված պայմանի հիմնավորումը

ՀՀ վարչապետի 24/12/09թ. թիվ 02/23.8/9772-09 հանձնարարական:
Միաժամանակ հավաստում ենք, որ գնման առարկան ներառված չէ պարբերական մրցույթներով կնքված պայմանագրերում:

3. Գնման պայմանագրի կնքումը

3.1. Գնման պայմանագիրը կնքելու նպատակով պատվիրատուի առաջարկը ներակայացնելու միջոցը՝

Մեկ անձին պայմանագիր կնքելու առաջարկի ներկայացում ☒

3.2. Տեղեկություններ այն անձանց (անձի) մասին, որոնց ուղարկվել է պատվիրատուի առաջարկը.

N	Անվանումը (անուն, ազգանունը	Հասցեն	Ներկայացված առաջարկի հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը կցվում է
1	2	3	4
1	«ՀՏԻ ԳՀԻ» ՓԲԸ	ք. Երևան, Աբելյան 6/1	23.12.2009թ. N 02/902-23-09

3.3. Տեղեկություններ պատվիրատուի առաջարկը ընդունած անձանց վերաբերյալ.

N	Անվանումը (անուն, ազգանունը	Հասցեն	Առաջարկը ընդունելու հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը կցվում է
1	2	3	4
1	«ՀՏԻ ԳՀԻ» ՓԲԸ	ք. Երևան, Աբելյան 6/1	23.12.2009թ. N 1/481